# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Ջերմուկ**

**13/մայիսի/2022 թ.**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....14..... անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ստեփանոս Վարդանյանը, առաջատար մասնագետի պաշտոնակատար Անուշ Առաքելյանը, ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Արմինե Ղազարյանը:

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գոհար Թադևոսյանը**

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ՄԱՅԻՍԻ 13–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի չորրորդ՝ մայիսի 13–ի նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2022-2026 թվականների ինգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ս. Վարդանյան*

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ս. Վարդանյան*

1.3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 91-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան*

1.6. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Ա. Առաքելյան*

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Կողմ*----------13 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 82-րդ հոդվածի 4-րդ կետերին համապատասխան

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների և հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----------12 *Դեմ*----------1 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----------12 *Դեմ*----------1 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 12-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, չափորոշիչները և իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Կողմ*----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ն/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով ավագանու անդամ Արմենուհի Սաֆարյանի՝ Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախագահին ուղղված դիմումը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին» N 91-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 1-ին կետում «Արմենուհի Սաֆարյանի» բառերը փոխարինել «Մխիթար Այվազյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----12---- *Դեմ*----1---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 2-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման

ա) հավելված 1-ում «4» թիվը փոխարինել «5» թվով, «26» թիվը փոխարինել «27» թվով,

բ) հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----3---- *Դեմ*----9---- *Ձեռնպահ*----2----

Որոշումն ընդունվածչէ. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՋԵԿ. ԱՆՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2022 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի հետևյալ բնակիչներին՝

Վարդան Բայաթյանին՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Արմեն Հարությունյանին.՝ 300 0000 (երեք հարյուր հազար) դրամ

Արման Խուդոյանին՝ 300 0000 (երեք հարյուր հազար) դրամ

Սարինե Հակոբյանին՝ 300 0000 (երեք հարյուր հազար) դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----14---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հունիսի .....-ին, ժամը՝ 17.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----14---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | |
| Վարդազարյան Աննա Վասակի բացակա | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |

| | |
|---|---|
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավար՝* ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը_____